

**ԴԵ ՀՄԻ ԴՈՒ ՊԱՐ ԱՐԻ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի),
Լոռու բարբառ (խոսվածք)**

Մի տղա մի պառավ մեր ա ունենում:

Օրերի մի օր սա փսակվում ա, կնգանը ասում ա.— Ա կնիկ, իմ մորը լավ մտիկ կանես, իրան ջահել կյանքը մաշել ա, ինձ էս տեսակ տղա յա դարձրել ու քեզ տվել:

Էս տղեն օր օրի վրա տենում ա՝ մերը լղարում ա, չոփ ա դառնում: Մի օր էլ մորը հրցնում ա, ասում ա.— Այ մերա, էդ խի՞ ես տհե լղարում:

Ասում ա.— Ես ինչ գիտեմ, այ բալա, մենձացել եմ, հալբաթ մենձութենիցն ա:

Մի օր սա կնգանը ասում ա.— Հաց բան շինի, գնում եմ աշխատանքի:

Կնիկը հաց բանը շինում ա, ասում ա.— Գնա մառանիցը ցաքատն էլ բի, հետս տանիլ տեմ:

Կնիկը գնում ա մառանը թե չէ, սա հացը բանը եղ ա ունում ու մտնում թախտի տակին տապանում:

Կնիկը գալիս ա տուն, տենում ա, մարթը գնացել ա, պառավն էլ գոմն ա սրբում:

Ճաշվա կողմը էս հարսը հաց բան ա սարքում նստում, ուտում: Պառավը տուն ա գալի, վեր հաց ուտի, սա մի աման ցորեն ա տան մեջտեղը շաղ տալի ու փետը վերունը կեսորը ծեծում, ասում ա.— Պար արի, պար արի, ա պառավ, ճաշդ հու չսառավ, եղով կուտես:

Էս խեղճ պառավը համ պար ա գալի, համ էլ էդ ցորենը մին-մին հվաքում, սա էլ մի դուլից դրան ծեծում ա: Հլե հվաքում ա պրծնում, ուզում ա գնա հաց ուտի, նորից ա ցորենը տան մեջին շաղ տալի ու պառավին ծեծում.— Պար արի, պար արի, ա պառավ, ճաշդ հու չսառավ:

Սա թողում չի վեր էդ խեղճ կնիկը հաց ուտի:

Էս տղեն էլ համփերում չի, դուս ա գալի, մի խան ցորեն ա տանովը մին շաղ տալի ու մի կակալ ճիպոտ վերունը ընգնում դրա ջանին:

Ասում ա.— Դե հմել դու պար արի, ես տեսնեմ:

Ասում ա ու տուր թե կտաս, սա բղավում ա.— Վա՛յ մարդ ջան, էլ անիլ չեմ, դալաթ եմ արել, էլ անիլ չեմ, ցավդ տանեմ:

Դրան մլավ ջարդում փշրում ա ու գցում դուրս:

Ասում ա.— Դե գնա, քու սհենցն ու նհենցը: